ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 դեկտեմբերի 2015 թվականի N 351-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆՈՂ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առաջատար պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող ատեստավորման հանձնաժողովի կազմը՝

1) *Էլզա Հովհաննիսյան* - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ,

2) *Ստելլա Ղազարյան* - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի Հրազդանի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետ,

3) *Արմեն Ավետիսյան* - Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի տնտեսական բաժնի պետ,

4) *Կարեն Բաբսեղյան* - Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի իրավական ապահովման և վերահսկողության վարչության գլխավոր մասնագետ,

5) *Գևորգ Գրիգորյան* - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Հրազդանի Պ. Սևակի անվան N 8 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն,

6) *Ժանետա Շաքոյան* - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Հրազդանի Ա. Իսահակյանի անվան N 9 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն:

2. Հանձնաժողովի նախագահ նշանակել՝ *Է. Հովհաննիսյանին*, քարտուղար՝ *Կ. Բաբսեղյանին*:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2015 թվականի դեկտեմբերի 21
ք. Հրազդան